ԹՈՒՐՔԻԱ (ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ). ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տարածքը՝ 756 հազ. կմ²
Բնակչությունը՝ 73,6 մլն մարդ
Մայրաքաղաքը՝ Անկարա
Պետական կարգը՝ խորհրդարանական հանրապետություն

Թուրքիան աշխարհի այն փոքրաթիվ երկրներից է, որի տարածքը միաժամանակ գտնվում է երկու աշխարհամասում՝ Եվրոպայում և Ասիայում:

Նրա տարածքի մեծ մասը (97 %) գտնվում է Ասիայում, այդ պատճառով էլ Թուրքիան համարվում է Հարավարևմտյան Ասիայի կազմում: Թուրքիայի եվրոպական մասը կազմում է պատմական Արևելյան Թրակիան, որը գտնվում է Բալկանյան թերակղզու հարավ-արևելյան մասում:

Պետական կարգով Թուրքիան խորհրդարանական, միաձույլ հանրապետություն է: Օրենսդիր իշխանությունը պատկանում է միապալատ խորհրդարանին՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին (մեջլիս): Գործադիր իշխանությունն իրականացնում է կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ: Գործադիր և օրենսդիր իշխանությունների սահմանադրական վերահսկողությունն իրականացնում է Թուրքիայի Սահմանադրական դատարանը:

Թուրքիան գլխավորապես լեռների ու սարահարթերի երկիր է: Ասիական մասի արևմուտքում տարածվում է Անատոլիական սարահարթը, իսկ արևելքում՝ Հայկական լեռնաշխարհը՝հրաբխային և ծալքավոր բազմաթիվ լեռներով: Թուրքիայի, Հայաստանի և Իրանի սահմանագլխին վեր է խոյանում Բիբլիական Արարատը: Թուրքիայի հյուսիսով, Սև ծովի ափերով ձգվում են Պոնտական լեռները, որոնց լանջերը զառիթափ իջնում են դեպի ծով: Հարավից եզրավորում են Տավրոսի լեռները:

Լեռները երիտասարդ են, որի պատճառով լեռնակազմական գործընթացները դեռևս շարունակվում են: Դրանք արտահայտվում են հաճախակի երկրաշարժերի և գործող հրաբուխների (Նեմրութ, Թոնդրակ) տեսքով:

Թուրքիան գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտու սահմաններում, սակայն նրա տարբեր մասերում կլիմայական պայմանները տարբեր են: Սև և Միջերկրական ծովերի ափամերձ շրջանները բնորոշվում են խոնավ մերձարևադարձային կլիմայական պայմաններով՝ առատ տեղումներով, մեղմ ձմեռներով և չափավոր շոգ ամառներով: Երկրի արևմտյան ափերն ունեն միջերկրածովյան տիպի կլիմա: Ափամերձ շրջանների կլիման նպաստավոր է տարվա մեծ մասում հողագործության, հատկապես մերձարևադարձային մշակաբույսերի աճեցման համար:

Ծովափերից դեպի երկրի խորքը կլիման դառնում է ցամաքային, ինչը դժվարացնում է հողագործության զարգացումը, իսկ լեռնային խիստ մասնատված մակերևույթը դժվարացնում է տրանսպորտային (հատկապես երկաթուղային) ուղիների կառուցումը: Հողերն այստեղ ամենուրեք ոռոգման կարիք ունեն, իսկ տրանսպորտային ցանցի զարգացման համար պահանջվում են հողաշինարարական մեծածավալ աշխատանքներ, կամուրջների, թունելների կառուցում:

Անատոլիական սարահարթի կլիման մերձարևադարձային ցամաքային է, Հայկական լեռնաշխարհինը՝ ավելի ցամաքային, ամառային և ձմեռային ջերմաստիճանների մեծ տատանումներով, տեղումների ավելի պակաս քանակությամբ: Մթնոլորտային տեղումներն աճում են ըստ տեղանքի բարձրության:

Թուրքիայի գետերը լեռնային են, արագահոս, սահանքավոր, վերին հոսանքներում առաջացնում են խոր կիրճեր: Հատկապես վերին հոսանքի շրջանում գետերն օժտված են ջրաէներգետիկ մեծ ներուժով, որի օգտագործումն այստեղ սկսվել է վերջին տասնամյակներում:



Խարբերդի դաշտում կառուցված Քեբանի ջրամբարի նկարը տիեզերքից

Թուրքիայի տարածքից են սկիզբ առնում տարածաշրջանի չորս խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Կուրը և Արաքսը, ինչպես նաև Սև ծովի ավազանին պատկանող Ճորոխը:

Մեծ է գետերի ոռոգիչ նշանակությունը: Դրանց վրա կառուցվել են ջրամբարներ և ջրաէլեկտրակայաններ:

Թուրքիայի լճերը մեծ մասամբ փոքր են, անհոսք և աղի: Որոշ լճերում աղ է արդյունահանվում: Ամենախոշորը Վանա լիճն է: Անատոլիական սարահարթում է գտնվում Թուզ լիճը:

Կլիմայական պայմանների ներքին տարբերություններն իրենց կնիքն են դրել Թուրքիայի հողաբուսական ծածկի վրա: Անտառները հիմնականում տարածված են մերձափնյա շրջաններում: Դրանք ունեն արդյունաբերական, հողապաշտպան, ջրակարգավորիչ և ռեկրեացիոն նշանակություն: Անտառապատ է Թուրքիայի տարածքի 25 %-ը:

Անատոլիական սարահարթում չոր կլիմայի պայմաններում ձևավորվել են չոր տափաստաններն ու կիսաանապատները, որոնք օգտագործվում են որպես արոտավայրեր:

Հայկական լեռնաշխարհում, Պոնտական և Տավրոսի լեռներում տարածվում են հյութալի խոտածածկով արոտավայրերը: Բերրի սևահողերով աչքի են ընկնում Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունները՝

Մուշի, Էրզրումի, Երզնկայի, Խարբերդի դաշտերը:

Թուրքիայի տարածքն աչքի է ընկնում մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոների կարևոր հանքավայրերով: Դրանցից մի քանիսի պաշարներով Թուրքիան կարևոր տեղ է գրավում աշխարհում: Այսպես, նրա ընդերքում են գտնվում բորատների համաշխարհային պաշարների կեսից ավելին:

Ասիական երկրների շարքում Թուրքիան առաջնակարգ տեղ է գրավում սնդիկի, ծարիրի, քրոմի, վոլֆրամի, պղնձի հանքաքարի պաշարներով:

Սև մետաղների շարքում կարևոր տեղ են գրավում քրոմը (համաշխարհային պաշարների 8 %-ը) և մանգանը:

Վառելիքային ռեսուրսներից մեծ են ածխի կուտակումները: Կան նաև նավթի և գազի պաշարներ:

Թուրքիայի ընդերքը հարուստ է տուֆի, պեռլիտի, ծծմբի, կերակրի աղի պաշարներով:

Թուրքիան աչքի է ընկնում նաև հանգստի և զբոսաշրջության բազմաթիվ ռեսուրսներով: Դրանք Միջերկրական ու Սև ծովերի ավազոտ և արևոտ լողափերն են, լեռնային գեղատեսիլ լանդշաֆտները, հանքային ջրերը:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի բնական պայմանները և ռեսուրսները նպաստավոր են մարդու կյանքի և տնտեսական գործունեության համար:

Պաշտոնապես թուրքերը կազմում են երկրի բնակչության մոտ 90 %-ը: Դա ճշգրիտ ցուցանիշ չէ, որովհետև Թուրքիայի պաշտոնական վիճակագրությունը բնակչության ազգային կազմի մասին հավաստի տվյալներ չի պարունակում: Մարդահամարները թուրք են գրանցում բոլոր նրանց, ովքեր թուրքերենը համարում են մայրենի լեզու:

Թուրքերի մարդաբանական առանձնահատկությունները ձևավորվել են թուրքական քոչվոր ցեղերի և Փոքր Ասիայի տեղաբնիկների բազմադարյա միախառնման գործընթացում: Փոքր Ասիայում թուրքերի էթնիկական ձևավորման ողջ ընթացքում նրանց մշակույթն ու լեզուն ներառել են հունական, հայկական, արաբական, բալկանյան ժողովուրդների լեզվական ու մշակութային տարրերը:

Երբ 1923թ. Թուրքիան հռչակվեց հանրապետություն, արգելվեց բազմակնությունը, մտցվեց եվրոպական հագուստ: Պաշտոնապես մերժվեց արաբական այբուբենը, այն փոխարինվեց լատինականով:

Թուրքիայի ազգային փոքրամասնությունների թիվը գերազանցում է երկու տասնյակը: Ազգային փոքրամասնություններից առանձնապես սուր է քրդերի և հայերի հիմնախնդիրը:

Թուրքերից հետո թվով երկրորդը քրդերն են: Նրանց թիվը պաշտոնական վիճակագրության համաձայն 10 մլն է: Քրդերը հավաք ապրում են երկրի հարավ-արևելքում: Նրանք երբեք պետականություն և անկախություն չեն ունեցել, բայց ներկայումս ձգտում են պետականություն ստեղծել Թուրքիայի տարածքում, որի համար տարիներ շարունակ պայքար են մղում:

Ներկայումս Թուրքիայում ապրում է շուրջ 80 հազար հայ: Գործում են համայնքային հաստատություններ, եկեղեցիներ, վարժարաններ, մշակութային ու մարզական կազմակերպություններ, որոնք հենվում են Կ.Պոլսի հայոց պատրիարքության և նրան ենթակա հիմնարկների վրա:

Թուրքիայի կառավարությունը շարունակում է չհարգել ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Թուրքերը դավանում են իսլամի սուննի ուղղությունը: Հանրապետական կարգեր հաստատվելուց հետո հոգևոր իշխանությունն անջատվեց պետությունից, դպրոցը՝ հոգևոր իշխանությունից: Դա բերեց պետական կյանքում իսլամի ազդեցության թուլացմանը:

Թուրքերենը պատկանում է ալթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին:

Թուրքիայի բնակչության բնական աճը համեմատաբար բարձր է՝ 1,1 %: Դա նշանակում է, որ երկրի բնակչությունը տարեկան ավելանում է շուրջ 800 հազարով: Թուրքական ընտանիքները բազմազավակ են:

Հաշվե՛ք Թուրքիայի բնակչության միջին խտությունը:

Առավել խտաբնակ են երկրի եվրոպական մասը և ծովափնյա շրջանները (180 մարդ/կմ²): Նոսր են բնակեցված Անատոլիական սարահարթի կենտրոնական և արևելյան մասերը:

Տեսարան Ադանա քաղաքից

Թուրքիայի ուրբանիզացման մակարդակը 70 % է: Դրա մակարդակն ու տեմպերը բարձր են երկրի արևմուտքում, դեպի ուր կենտրոնական ու արևելյան շրջաններից մշտական գաղթ է կատարվում:

Թուրքիայի խոշորագույն քաղաքը Ստամբուլն է՝ նախկին Կոստանդնուպոլիսը (11 մլն բնակիչ): Այն երկրի հիմնական նավահանգիստն է, առևտրական, արդյունաբերական ու մշակութային գլխավոր կենտրոնը: Քաղաքը Բոսֆորի նեղուցով բաժանված է երկու մասի. մեծ մասը ընկած է եվրոպական մասում:

Մյուս խոշոր քաղաքներն են մայրաքաղաք Անկարան (4 մլն բնակիչ), Իզմիրը (1,2 մլն), Ադանան (1 մլն):

Թուրքիայում զգալի չափերի է հասնում արտագաղթը: Արտագաղթում են հիմնականում դեպի Գերմանիա և Եվրամիության մյուս երկրներ:

Թուրքիան աշխարհի այն սակավաթիվ երկրներից է, որի բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:

Տնտեսությունը: Ժամանակակից Թուրքիան **տնտեսության** զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներից է: Վերջին տասնամյակներում առաջանցիկ տեմպերով զարգանում է արդյունաբերությունը: Նրա բաժինն ազգային եկամտում զգալիորեն գերազանցում է գյուղատնտեսությանը: Արդյունաբերությունն ապահովում է տնտեսության մյուս ոլորտների առաջընթացը:

Նկատելիորեն աճել է Թուրքիայի կշիռը համաշխարհային տնտեսությունում:

Զարգացած են արդյունաբերության և՛ ավանդական ճյուղերը, և՛ ժամանակակից բարձր տեխնոլոգիաները:

Թուրքիան առանձնանում է ածխի, սև և գունավոր մետաղների հանքաքարի, քիմիական հումքի հանույթով: Դրանց բազայի վրա զարգանում են էլեկտրաէներգետիկան, սև և գունավոր մետաղաձուլությունը, քիմիական արդյունաբերությունը:

Թուրքիայի տնտեսության ճյուղային կառուցվածքը



Էլեկտրաէներգետիկական արդյունաբերության ձեռնարկություններն աշխատում են քարածխի, տեղական և ներմուծվող նավթի, բնական գազի հիման վրա: Խոշոր ՋԷԿ-եր գործում են Ստամբուլում և Իզմիրում: Թուրքիայում են գտնվում տարածաշրջանի խոշոր ջրաէլեկտրակայանները (օրնակ՝ Եփրատի վրա կառուցված Քեբանի ՋրԷԿ-ը): Դրանց միջոցով Թուրքիայում լուծվում են նաև ոռոգման խնդիրները (օրինակ՝ Քեբանի ջրամբարը հնարավորություն է տալիս ոռոգելու 1,6 մլն հա գյուղատնտեսական հողահանդակներ):

Սև մետաղաձուլական ձեռնարկություններն աշխատում են սեփական վառելիքի և հումքի բազայի վրա: Խոշոր կենտրոնը Իսքենդերունն է:

Գունավոր մետաղաձուլության ձեռնարկություններում արտադրում են պղինձ, կապար, ցինկ: Խոշոր կենտրոնը Սեյդիշեհիրն է:

Մեքենաշինությունը Թուրքիայի տնտեսության ամենից արագ զարգացող ճյուղերից է: Բարձր տեխնոլոգիաների կիրառման միջոցով շարունակվում են ստեղծվել բարձրորակ արտադրանք տվող ձեռնարկություններ: Թուրքիայում նախատեսվում է ստեղծել տեխնոլոգիական 16 գոտի՝ երկրի ողջ տարածքով մեկ: Տեխնոպարկերի գլխավոր բազաները լինելու են Ստամբուլի և Անկարայի համալսարանները:

Մեքենաշինական ձեռնարկությունները տեղաբաշխված են խոշոր քաղաքներում: Դրանք թողարկում են ավտոմոբիլներ, տրակտորներ, ինքնաթիռներ, նավեր, երկաթուղային շարժակազմ, վագոններ, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային արտադրանք:

Աչքի ընկնող տեղ է գրավում քիմիական արդյունաբերությունը, որը գլխավորապես արտադրում է պլաստմասաներ, հանքային պարարտանյութեր, քիմիական կենցաղային իրեր, ռետինատեխնիկական ապրանքներ (օրինակ՝ անվադողեր): Ճյուղի խոշոր կենտրոններն են Իսքենդերունը, Իզմիրը, Մերսինը:

Թուրքիան ավանդական թեթև (հատկապես տեքստիլի) և սննդի արդյունաբերության երկիր է: Այս ճյուղերը մասնագիտացել են բամբակյա և բրդյա գործվածքների, կաշվի և կաշվե հագուստի, գորգերի, պահածոների, շաքարի, ծխախոտի, անասնապահական մթերքների արտադրությամբ:

Թուրքիայի **գյուղատնտեսությունը** բազմաճյուղ է և գյուղատնտեսական գլխավոր մթերքներով բավարարում է երկրի պահանջները, իսկ որոշ տեսակներ՝ նույնիսկ արտահանում է:

Գյուղատնտեսության հիմքը բուսաբուծությունն է: Թուրքիան տարածաշրջանի ամենահերկված երկիրն է: Տարածքի 30 %-ը հերկված հողեր են:

Գյուղատնտեսության համար կարևոր նշանակություն է ունեցել ոռոգման համակարգի ստեղծումը: Նրա զարգացմանը նպաստում են նաև հանքային պարարտանյութերի, բարձր տեխնոլոգիաների լայն կիրառումը: Փոքր տնտեսությունները հիմնականում տարածված են քրդերով բնակեցված արևելյան շրջաններում:

Թուրքիայի գլխավոր մշակաբույսերն են հացահատիկը (հատկապես ցորեն, գարի, բրինձ), տեխնիկական բույսերը (բամբակենի, ծխախոտ, շաքարի ճակնդեղ): Աշխարհում մեծ համբավ են վայելում ծխախոտի «Սամսուն» և «Տրապիզոն» տեսակները:

Մեծ է հատկապես պտուղների և բանջարեղենի բաժինը: Պտղաբուծությունը արտահանության գլխավոր ճյուղերից է: Թուրքիայում ընդարձակ տարածություններ են գրավում խաղողի և պտղատու այգիները: Ամենատարածված պտուղներն են նաև թուզը, ցիտրուսները (լիմոն, նարինջ), ձիթապտուղը, կաղինը, ընկույզը, խնձորը: Սև ծովի ափերին մշակում են նաև թեյ:

Թուրքիայի անասնապահության մթերատվությունը բարձր չէ: Այստեղ դեռևս տիրապետող է զարգացման էքստենսիվ ուղղությունը: Անասնապահությունը հիմնված է երկրի բնական արոտավայրերի բազայի վրա:

Փոքր Ասիա թերակղզում բուծում են անգորական այծեր, որոնք հայտնի են նուրբ բրդով՝ մոհայրով, որի արտադրությամբ Թուրքիան առաջինն է աշխարհում: Կարևոր նշանակություն ունի ոչխարաբուծությունը, որը տարածված է ամենուրեք: Ոչխարների և այծերի գլխաքանակով Թուրքիան աշխարհի առաջատար երկրներից է:

Թուրքիայի անասնապահության հնագույն ճյուղերից է շերամապահությունը: Նորագույն ճյուղերից է թռչնաբուծությունը: Լեռնային շրջաններում զարգացած է մեղվաբուծությունը:

Հարավարևմտյան Ասիայի մյուս երկրների համեմատությամբ Թուրքիան ունի **հաղորդակցության ուղիների** մեծ ցանց: Երկրի համար կարևոր դեր է կատարում երկաթուղային տրանսպորտը: Ստամբուլից դուրս եկող երկաթուղիները Թուրքիան կապում են եվրոպական երկրների հետ: Թուրքիան երկաթուղային կապ ունի նաև Հայաստանի հետ, սակայն քաղաքական պատճառներով այն դեռևս չի օգտագործում:

Թուրքիայի ավտոճանապարհների մեծ մասը բարեկարգ է: Ավտոտրանսպորտը ապահովված է ժամանակակից բեռնատար մեքենաներով, որոնք ներքին բեռնափոխադրումներից բացի կրում են մեծ ծավալի միջազգային բեռնափոխադրումներ:

Թուրքիայի ցամաքային տրանսպորտի նորագույն ձև են խողովակաշարերը (նավթամուղ, գազամուղ), որոնք Ադրբեջանի, Ռուսաստանի նավթը և գազը հասցնում են միջերկրածովյան երկրներ:

Ծովային տրանսպորտի համար մեծ դեր է կատարում Բոսֆորի նեղուցը, որով բացի սեփական նավերից, լողում են նաև այլ երկրների նավեր: Խոշոր նավահանգիստներն են Ստամբուլը, Իզմիրը, Սամսունը, Իսքենդերունը: Վերջինս նաև ՆԱՏՕ-ի ռազմածովային հենակետն է:

Թուրքիայով են անցնում բազմաթիվ երկրների օդային կարևոր ուղիները:

Թուրքիան ունի զբոսաշրջության զարգացման մեծ հնարավորություններ:

Նշե՛ք Թուրքիայի զբոսաշրջային ռեսուրսները:

Զբոսաշրջությունից Թուրքիան տարեկան ստանում է մոտ 20 միլիարդ դոլարի եկամուտ: Տարեկան Թուրքիա է այցելում ավելի քան 17մլն զբոսաշրջիկ: Վերջին տարիներին ավելացել է Արևմտյան Հայաստան մեկնողների թիվը: Թուրքիայի միջերկրածովյան ափերը, հատկապես Անթալիայի շրջանը, դարձել է միջազգային զբոսաշրջության խոշոր կենտրոններից մեկը:

Թուրքիան իր արտաքին տնտեսական հարաբերություններում կողմնորոշված է հատկապես դեպի Եվրամիության անդամ երկրներ և ԱՄՆ: Վերջին տարիներին նկատվում է տնտեսական կապերի աշխուժացում Ռուսաստանի, ԱՊՀ անդամ թուրքալեզու պետությունների և Վրաստանի հետ: Մեծանում են կապերը արաբական երկրների հետ:

Թուրքիան գլխավորապես արտահանում է գյուղատնտեսական արտադրանք (կաշի, կաշվե իրեր, բամբակ, բուրդ, ցիտրուսներ, ձիթապտուղ, չոր մրգեր): Մեծանում է պատրաստի արդյունաբերական արտադրանքի բաժինը արտահանման մեջ:

Ներկրում է վառելիք, արդյունաբերական հումք, մեքենաներ, սարքավորում, պարեն: